ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Գորիս 07 ապրիլի 2024թ

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են Գորիս համայնքի ավագանու 21 անդամներից 14-ը՝ Ա. Առուշանյանը, Ա.Աղաջանյանը, Մ. Առուստամյանը, Լ. Բաղդասարյանը, Ա. Գալստյանը, Հ. Իվանյանը, Գ. Հակոբյանը, Մ. Հակոբյանը, Դ. Մաշուրյանը, Ս. Մկրտչյանը, Ա. Սոնյանը, Ռ. Տոռոզյանը, Գ. Օհանջանյանը և Ն. Օրդյանը:

Նիստն առցանց հեռարձակվում է:

Նիստը վարում է Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը:

Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Ա. Բաղդագյուլյանը:

Ա. Առուշանյանը ավագանուն ներկայացրեց 2024թվականի ապրիլի 7-ի վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օրակարգը՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Մ.ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 146/43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԹԱՂԱՄԱՍՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը նշեց նաև, որ նախօրոք ներկայացված օրակարգային հարցերին անհրաժեշտություն է առաջացել ավելացնել ևս 1 լրացուցիչ հարց.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 71-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցերի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 13, դեմ 0, ձեռնպահ՝ 0 (Անի Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը) ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով,

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օրակարգը՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Մ.ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 146/43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԹԱՂԱՄԱՍՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 71-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<u>Օրակարգի 1-ին հարց՝</u>

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Նարեկ Մնացականյան)

Հարցի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 14, դեմ 0, ձեռնպահ՝ 0 ավագանին որոշեց՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին

մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին Գորիս համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն կից հավելվածների:

Օրակարգի 2-րդ հարց՝

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Գարեգին Փարսյան)

Հարցի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 01.06.2006թ. թիվ 1053-Ն որոշումը

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում գտնվող, Գորիս քաղաքի Գ. Սևյան փողոց 1-ին նրբանցք 1/56 հասցեի 0.00175հա հողատարածքը (վկ. ծածկ. 09-003-0003-0260) առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տրամադրել ավտոտնակ կառուցելու նպատակով, 1 քմ տարեկան վարձավճար սահմանելով 400 դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Օրակարգի 3-րդ հարց՝

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Մ.ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 146/43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Գարեգին Փարսյան)

Հարցի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, (Արտյոմ Աղաջանյանը չի մասնակցել քվեարկությանը) ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի

Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետը

1. 2024 թվականին բաց դասական աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 146/43 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման 0,0066հա հողամասը (ծածկ. 09-003-0233-0113), ավտոտնակ կառուցելու նպատակով, 1 քմ մեկնարկային գինը սահմանելով 3200 ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել նախատեսված հողամասերի աճուրդի կազմակերպումը և իրականացումը:

<u>Օրակարգի 4-րդ հարց՝</u>

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԹԱՂԱՄԱՍՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Գարեգին Փարսյան)

Հարցի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.8–րդ բաժնի 3-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգը սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 4-րդ և 8-րդ կետերով և հաշվի առնելով Գորիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ավանգարդ 1-ին փողոցը անվանափոխել «Արզումանյան փողոց 2-րդ նրբանցք»՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ավանգարդ 2-րդ փողոցը անվանափոխել «Արզումանյան փողոց 1-ին նրբանցք»՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ավանգարդ 4-րդ փողոցը անվանափոխել «Սևյան փողոցի 3-րդ նրբանցք»՝ համաձայն հավելված 3-ի:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Թանգուն ձոր փողոցը անվանափոխել «Թանգուն ձոր թաղամաս»՝ համաձայն հավելված 4-ի:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Այգեստան փողոցը անվանափոխել «Այգեստան թաղամաս»՝ համաձայն հավելված 5-ի:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Հարթաշեն գյուղի թաղամասն անվանակոչել «Ձորաշեն թաղամաս»՝ համաձայն հավելված 6-ի:
7. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Օրակարգի 5-րդ հարց

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 71-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Նարեկ Մնացականյան)

Հարցի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ավագանին որոշեց

1. Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանարապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու և Հայաստանի Հանարապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 106-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու և թիվ 113-Ա որոշման թիվ 2 հավելվածում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 71-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն կից հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մայիսի 1-ից:

Օրակարգի 6-րդ հարց՝

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Առուշ Առուշանյան)

Հարցի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով,

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի մայիսի 17-ը, ժամը՝ 15:00-ն:

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին, նիստը ավարտվեց ժամը՝ 13:20-ին:

Համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
2. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
3. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
5. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ
6. ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ
7. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ
9. ՄԱՇՈՒՐՅԱՆ ԴԱՎԻԹ
10. ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
11. ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
12. ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
13. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԳԱՐԵՆ
14. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

07 ապրիլի 2024թ